ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2021
02.2021
03.2021
04.2021
05.2021
06.2021
07.2021
Հուլիս
08.2021
09.2021
10.2021
11.2021
12.2021

ՀՀ կենտրոնական բանկ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թողարկման 28-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2021

Հուլիս

թիվ 7 (275)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-288-Ն ՀՀ օրենքը

5 «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-296-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

13 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՀՈՌ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ-ին այլ վայրում ևս գրավատնային գործունեության լիցենզիա տրամադրելու մասին

13 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԳՈԼԴ ՔԵՇ» ՍՊԸ գրավատնային գործունեության, «ԷՆ.ՓԱ» ՍՊԸ արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին

13 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին նոր դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա տրամադրելու մասին

13 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Արդշինբանկ» ՓԲԸ «Բյուզանդ», «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ «Էրեբունի» մասնաճյուղերը գրանցելու մասին

13 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «Արցախբանկ» ՓԲԸ «Կենտրոն» մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու մասին

13 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 վարկային կազմակերպության, 3 փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու, 1 վարկային կազմակերպության, 3 փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

14 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 100-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 108-Ն որոշումը «Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2021 թվականի երկրորդ եռամսյակ)»

21 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

*«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքում լրացում կատարելու մասին**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 35.1-ին հոդվածով.

«Հոդված 35.1. Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր

1. Կենտրոնական բանկը սույն օրենքով սահմանված իր նպատակների և գործառույթների իրականացման, ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներպետական իրավասու մարմինների հետ համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով վարում է բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր, որին պարտադիր մասնակցում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր առևտրային բանկերը:

2. Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրը ներառում է բացված, փակված (այդ թվում՝ սույն հոդվածն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող հինգ տարվա ընթացքում փակված) բանկային հաշիվների, ինչպես նաև տրամադրված, օգտագործումը դադարեցված (այդ թվում՝ սույն հոդվածն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող հինգ տարվա ընթացքում օգտագործումը դադարեցված) բանկային պահատուփերի վերաբերյալ տեղեկություններ, մասնավորապես բանկի հաճախորդի բանկային հաշվի համարը, բանկային հաշվի բացման և փակման, բանկային պահատուփի տրամադրման և օգտագործման դադարեցման ամսաթվերը, հաճախորդի և հաճախորդի կողմից լիազորված անձի նույնականացման՝ պետական իրավասու մարմնի տված փաստաթղթի տվյալները, ինչպես նաև բանկի վերաբերյալ տեղեկությունները:

3. Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի վարման կարգը, ներառման ենթակա նույնականացման՝ պետական իրավասու մարմնի տված փաստաթղթի տվյալների և բանկի վերաբերյալ տեղեկությունների ցանկը, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկությունների (այդ թվում՝ հաշվետվությունների) տրամադրման ձևը և ժամկետները սահմանվում են Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան

14 հուլիսի 2021 թ., Երևան, ՀՕ-288-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2021 թվականի հունիսի 30-ին (ՀՀՊՏ, 15.07.2021):

*«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Հոդված 1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-80-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 9.1-ին կետերով.

«2.1) նախորդող հանցագործությունը հանցագործություն է, որի կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի ստացվել կամ առաջացել է գույքը».

«9.1) դրամական փոխանցումը գործարք է, որը ֆինանսական հաստատության միջոցով կատարվում է փոխանցումը կատարողի անունից՝ նպատակ ունենալով այդ կամ այլ ֆինանսական հաստատությունում որոշակի գումար հասանելի դարձնել փոխանցումն ստացողի համար՝ անկախ փոխանցումը կատարողի և փոխանցումն ստացողի՝ նույն անձը լինելու հանգամանքից.».

2) 3.1-ին կետի «տրամադրումն է» բառերը փոխարինել «տրամադրումը կամ հավաքումն է» բառերով.

3) 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) իրական շահառուն ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է, կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.».

4) 16-րդ կետը «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «տրաստը կամ» բառերով.

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-ին կետով.

«16.1) տրաստը օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունե-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2021 թվականի հունիսի 30-ին (ՀՀՊՏ, 16.07.2021):

ցող այլ իրավաբանական կազմավորում է, որտեղ տրաստի կառավարիչը ֆիդուցիար պարտավորությունների հիման վրա կատարում է տրաստի հիմնադրի կողմից սեփականության իրավունքով իրեն փոխանցված գույքի հետ կապված գործարքներ՝ ի շահ տրաստի շահառուի.».

6) 21-րդ կետից հանել «, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ (հայր, մայր, ամուսին, տատ, պապ, քույր, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ)» բառերը, իսկ նույն կետը «շահառուները,» բառից հետո լրացնել «կյանքի ապահովագրության վկայագրերի շահառուները,» բառերով.

7) 22-րդ կետի «բ» ենթակետը «հաճախորդի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսացող իրական շահառուի» բառերով.

8) 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25) քաղաքական ազդեցություն ունեցող անձը պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձն է (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը): Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի գործառույթներ իրականացնող անձանց: Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝

ա. պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,

բ. խորհրդարանի անդամները,

գ. բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների դատավորները, անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,

դ. կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի անդամները,

ե. դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,

զ. քաղաքական կուսակցության պաշտոնատար անձինք,

է. պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները,

ը. տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները,

թ. միջազգային կազմակերպության ղեկավարները, ղեկավարի տեղակալները, խորհրդի անդամները կամ կառավարչական կամ վերահսկողական այլ համանման գործառույթներ իրականացնող մարմինների անդամները.».

9) լրացնել հետևյալ բովանդակությամբ 25.1-ին և 25.2-րդ կետերով.

«25.1) միջազգային կազմակերպությունը անդամ երկրների միջև միջազգային պայմանագրի կարգավիճակ ունեցող պաշտոնական քաղաքական համաձայնության հիման վրա ստեղծված կազմակերպություն է, որն իր գտնվելու վայրի երկրում ռեզիդենտ կառուցվածքային միավոր չի համարվում.

25.2) ընտանիքի անդամը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անձն է.»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 2
ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՉԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը «ֆինանսավորման» բառից հետո լրացնել «, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման» բառերով:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը «գումարը» բառից հետո լրացնել «հավասար է կամ» բառերով.

2) 4-րդ մասի 3-րդ կետի «բ» ենթակետի «տնօրեն (գործադիր մարմին)» բառերը փոխարինել «գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ (մարմնի անդամ)» բառերով.

3) 4-րդ մասի 5-րդ կետի «դրամը» բառը փոխարինել «դրամին հավասար կամ դրան» բառերով.

4) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Հաշվետվություն տրամադրող անձին, նրա աշխատակիցներին (ղեկավարներին) արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկություններ են տրամադրվում լիազոր մարմնին, ինչպես նաև այլ անձանց, բացառությամբ ֆինանսական խմբի դեպքում՝ ֆինանսական խմբի անդամին, հայտնել հաշվետվության կամ այլ տեղեկությունների տրամադրման կամ չտրամադրման, այդ թվում՝ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն հանձնարարականների ստացման կամ չստացման փաստի մասին:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 6-րդ կետի «գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը» բառերը փոխարինել «գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը» բառերով.

2) 1-ին մասի 18-րդ կետը «տվյալների հիման վրա» բառերից հետո լրացնել «կամ սեփական նախաձեռնությամբ» բառերով.

3) 4-րդ մասի «10-րդ և 11-րդ կետերով սահմանված իրավասությունները» բառերը փոխարինել «10-րդ կետով սահմանված իրավասությունը, ինչպես նաև 11-րդ կետով սահմանված՝ ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու իրավասությունը» բառերով:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 13-րդ կետի «՝ ոչ ֆինանսական հաստատության կամ անձի» բառերը փոխարինել «գործառույթները հաշվետվություն տրամադրող անձի» բառերով.

2) 18-րդ կետի «այլ դրույթներ» բառերը փոխարինել «պարտականությունների կատարմանը ներկայացվող նվազագույն պահանջները» բառերով:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը փոխարինել «, որոնք կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով և չեն կարող տրամադրվել երրորդ անձի, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների» բառերով:

Հոդված 8. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի առաջին նախադասությունը «կասկածներ» բառից հետո լրացնել «կամ նախորդող հանցագործության այնպիսի հիմնավոր կասկածներ, որոնք կարող են հանգեցնել փողերի լվացման» բառերով.

2) 4-րդ մասի առաջին նախադասությունը «վերաբերյալ» բառից հետո լրացնել «կամ նախորդող հանցագործության կասկածի կամ դեպքի վերաբերյալ, որը լիազոր մարմնի կարծիքով կարող է հանգեցնել փողերի լվացման» բառերով:

Հոդված 9. Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ նախադասությունից հանել «կամ միանգամյա գործարք կատարելու» բառերը.

2) 3-րդ մասի «դրամը» բառը փոխարինել «դրամին հավասար կամ դրան» բառերով, իսկ նույն մասը «(բացառությամբ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածների առկայության, որի դեպքում հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունն իրականացվում է անկախ գումարային սահմանաչափից),» բառերից հետո լրացնել «ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում,» բառերով.

3) 4-րդ մասի 2-րդ կետում՝

ա. «վայրը,» բառից հետո լրացնել «գործունեության իրականացման վայրը (եթե տարբերվում է իրավաբանական անձի գտնվելու վայրից), կանոնադրությունը կամ համանման այլ փաստաթուղթը,» բառերով,

բ. «գործադիր մարմնի ղեկավարի» բառերը փոխարինել «գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձի (մարմնի անդամի)» բառերով.

4) 5-րդ մասի 1-ին կետից հանել «պարզի լիազորված անձի առկայությունը և առկայության դեպքում,» բառերը, իսկ նույն մասը «լիազորված անձին» բառերից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերով.

5) 5-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) նույնականացնի իրական շահառուին և ողջամիտ քայլեր ձեռնարկի նրա ինքնությունն ստուգելու նպատակով՝ արժանահավատ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա, ընդ որում Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպության կամ հիմնարկի դեպքում՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով սահմանված կարգով:».

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Սույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ հաճախորդի իրական շահառուին նույնականացնելու և ինքնությունն ստուգելու նպատակով հաշվետվություն տրամադրող անձի ձեռնարկած քայլերը, եզրահանգումները և դրանց հիմնավորումները փաստաթղթավորվում ու պահպանվում են սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետում:».

7) 6-րդ մասից հանել «հաճախորդի իրական շահառուին պարզելու նպատակով» և «(բացառությամբ արժեթղթերի շուկայի կարգավորման օրենսդրությամբ նախատեսված հաշվետու թողարկողների)» բառերը.

8) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին մասով.

«6.1. Տրաստ կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում հանդիսացող հաճախորդների դեպքում հաշվետվություն տրամադրող անձը հաճախորդի իրական շահառուին նույնականացնելու և ողջամիտ քայլերի ձեռնարկմամբ նրա ինքնությունն ստուգելու նպատակով պետք է լիարժեք տեղեկություններ ունենա դրա հիմնադիրների, կառավարիչների, շահառուների (այդ թվում՝ շահառուների դասի), շահերի պաշտպանի (առկայության դեպքում) և իրական (փաստացի) հսկողություն իրականացնող այլ ֆիզիկական անձի կամ համանման գործառույթներ իրականացնող անձի և նրանց լիազորությունների վերաբերյալ:».

9) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Հաշվետվություն տրամադրող անձը պետք է հասկանա հաճախորդի գործարար բնութագիրը, գործարքի կամ գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ձեռք բերի տեղեկություններ գործարքի կամ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին:».

10) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին մասով.

«7.1. Տրաստի կառավարիչ հանդիսացող հաճախորդը (այդ թվում՝ ոչ ֆինանսական հաստատությունը) սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով սահմանված դեպքերում հաշվետվություն տրամադրող անձի հետ գործարք կատարելիս կամ գործարար հարաբերություն հաստատելիս պարտավոր է բացահայտել իր կարգավիճակը:»:

Հոդված 10. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի «օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձ» բառերը փոխարինել «տրաստ կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով.

«4.1. Հաշվետվություն տրամադրող անձը պարտավոր է նույնականացնել կյանքի ապահովագրության կամ ներդրումային բնույթի այլ ապահովագրական վկայագրի պայմանագրի շահառուին վերջինիս ինքնությունը կամ բնորոշ հատկանիշները պարզելուց անմիջապես հետո, իսկ ինքնության ստուգումն իրականացնել ապահովագրական հատուցումը վճարելու պահին: Ընդ որում՝

1) ֆիզիկական կամ իրավաբանական անձ շահառուների համար՝ առնվազն ձեռք բերելով տվյալ անձի անունը, ազգանունը կամ անվանումը.

2) որոշակի հատկանիշների կամ որոշակի խմբի դասվելու կամ որևէ այլ հիմքով շահառուների համար՝ առնվազն ձեռք բերելով ապահովագրական հատուցումը վճարելու պահին շահառուներին նույնականացնելու համար բավարար տեղեկություններ:»:

Հոդված 11. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 4-րդ կետը «փաստաթղթավորի» բառից առաջ լրացնել «հասկանա, ինչպես նաև» բառերով.

2) 5-րդ կետից հանել «տարանցիկ հաշիվների դեպքում» բառերը, իսկ նույն կետի «ա» ենթակետը «իրականացրել է» բառերից առաջ լրացնել «տարանցիկ հաշիվների դեպքում» բառերով:

Հոդված 12. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ կետի «անձը հաստատող փաստաթղթի տվյալները» բառերը փոխարինել «կամ անձը հաստատող փաստաթղթի տվյալները, կամ հասցեն, կամ ծննդյան ամսաթիվը և վայրը», իսկ նույն կետը «(պետական գրանցման, հաշվառման համարը և այլն)» բառերից հետո լրացնել «, կամ գտնվելու վայրի հասցեն» բառերով.

2) 2-րդ մասի «Բոլոր դրամական» բառերը փոխարինել «Դրամական» բառով:

Հոդված 13. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը «պետք է» բառերից հետո լրացնել «ձեռնարկի համարժեք միջոցառումներ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերը զսպելու ուղղությամբ, ինչպես նաև» բառերով:

Հոդված 14. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 11-րդ կետը «հաճախորդը» բառից հետո լրացնել «կամ իրական շահառուն» բառերով.

2) 15-րդ կետը «տեղեկատվության» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունների» բառերով:

Հոդված 15. Օրենքի 26-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «5» թիվը փոխարինել «15» թվով.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Այն դեպքում, երբ լիազոր մարմինը սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով կասեցված գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ ծանուցում է տրամադրում քրեական հետապնդում իրականացնող մարմնին, կասեցման ժամկետը համարվում է երկարաձգված ծանուցման տրամադրման պահից 15 օրով, որի մասին լիազոր մարմինը տեղեկացնում է ֆինանսական հաստատությանը: Կասեցման ժամկետը երկարաձգելու հիմնավոր անհրաժեշտության դեպքում քրեական հետապնդում իրականացնող մարմինը 15 օրվա ընթացքում տեղեկացնում է լիազոր մարմնին: Կասեցման ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության մասին լիազոր մարմնին չտեղեկացնելու դեպքում կասեցումը վերանում է:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կասեցման ժամկետը լիազոր մարմնի հիմնավոր կարծիքով երկարաձգելու անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը որոշում է կայացնում կասեցման ժամկետը մինչև 30 օրով երկարաձգելու մասին: Սույն մասում նշված ժամկետում լիազոր մարմնի որոշումը ֆինանսական հաստատությանը չտրամադրվելու դեպքում կասեցման մասին որոշումը համարվում է ուժը կորցրած:».

4) 4-րդ մասի «պարզվի, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ» բառերը փոխարինել «առկա չէ գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման հետագա անհրաժեշտությունը» բառերով:

Հոդված 16. Օրենքի 27-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 27. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման մերժումը կամ դադարեցումը».

2) 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Այն դեպքում, երբ հնարավոր չէ իրականացնել սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-7-րդ մասերով նախատեսված պարտականությունները, կամ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման մերժման հանձնարարականի ստացման դեպքերում հաշվետվություն տրամադրող անձը պետք է մերժի գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը և դիտարկի դրա՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն կասկածելի որակելու հարցը:

2. Այն դեպքում, երբ սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա գործարար հարաբերություն հաստատելուց հետո հնարավոր չէ իրականացնել այդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պարտականությունները, ինչպես նաև այն դեպքում, երբ հնարավոր չէ իրականացնել սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված պարտականությունները կամ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գործարար հարաբերության դադարեցման հանձնարարականի ստացման դեպքերում հաշվետվություն տրամադրող անձը պետք է դադարեցնի գործարար հարաբերությունը և դիտարկի դրա՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն կասկածելի որակելու հարցը:»:

3) 3-րդ մասից հանել «անդրսահմանային» բառը:

Հոդված 17. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունը «սառեցման» բառից հետո լրացնել «, այդ թվում՝» բառերով:

Հոդված 18. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան

15 հուլիսի 2021 թ., Երևան, ՀՕ-296-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Այլ վայրում ևս գրավատնային գործունեության լիցենզիա է տրամադրվել*** «ՀՈՌԹ ԿՐԵԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 96Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԳՈԼԴ ՔԵՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության, «ԷՆ.ՓԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 97Ա, 102Ա):
- ***Նոր դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա է տրամադրվել*** «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 104Ա):
- ***Գրանցվել են*** «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Բյուզանդ», «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Էրեբունի» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/358Ա, 1/369Ա):
- ***Թույլատրվել է*** «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Կենտրոն» մասնաճյուղի ***գործունեության դադարեցումը*** (որոշում թիվ 1/359Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 վարկային կազմակերպության, 3 փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 9500000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/357, 1/400Ա, 1/403Ա, 1/404Ա), 1 վարկային կազմակերպության, 3 փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/357Ա, 1/399Ա, 1/403Ա, 1/404Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բանկերի կողմից ներկայացվող հաշվետվությունները համապատասխանեցնել նորմատիվային դաշտի փոփոխություններին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 55-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելված 1-ով հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի 7-րդ կետի 2-ից 9-րդ նախադասությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հաշվետվության 1-ին էջում ներկայացվում են բոլոր արժույթներով ներգրավված միջոցները (անվանական գումարների (մայր գումարների) մնացորդները) դրամական արտահայտությամբ, հազար դրամներով (բացառությամբ վերջին տողի, որտեղ արտարժույթով պահուստավորման ենթակա միջոցները լրացվում են համապատասխան արտարժութային արտահայտությամբ), առանց տասնորդական միավորների: Ներգրավված միջոցների խմբավորումը կատարվում է ըստ հետևյալ խմբերի՝ «ՀՀ դրամ», «ԱՄՆ դոլար», «Եվրո» և «Այլ արտարժույթ»: Հաշվետվության 1-ին էջի 2-ից 21-րդ սյունակների տողերում ներկայացվում է պարտադիր պահուստավորման ենթակա ներգրավված միջոցների հաշվարկը: Ընդ որում՝ 2-ից 13-րդ սյունակների տողերում լրացվում են Կանոնակարգ 2-ի 24-րդ և 24.1 կետերով սահմանված ներգրավված միջոցները, իսկ 14-ից 17-րդ սյունակների տողերում լրացվում են Կանոնակարգ 2-ի 24.1.1-րդ և 24.1.2-րդ կետերով սահմանված ներգրավված միջոցները՝ ըստ արժույթների: 22-ից 25-րդ սյունակների տողերում լրացվում են Կանոնակարգ 2-ի 53.1-րդ կետով սահմանված կարգով վաղաժամկետ մարված միջոցների գծով պահուստավորման ենթակա գումարները՝ ըստ արժույթների: 26-ից 28-րդ սյունակների տողերում ներկայացվում է փաստացի պահուստավորված միջոցների հաշվարկը: Ընդ որում, 26-ից 28-րդ սյունակների տողերը լրացնելիս հիմք են ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված հաշվետու բանկի թղթակցային հաշիվների տվյալ օրվա մնացորդն արտացոլող քաղվածքները: 29-ից 32-րդ սյունակների տողերում ներկայացվում են հաշվետու բանկի կողմից ներգրավված այն միջոցները, որոնք, համաձայն Կանոնակարգ 2-ի 53-րդ կետի 7-րդ ենթակետի, ենթակա չեն պարտադիր պահուստավորման:»:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2021 թ. հուլիսի 6-ին (ՀՀԳՏ, 15.07.2021):

2. Որոշման Հավելված 2-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ» ձև թիվ 4 հաշվետվության առաջին էջը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
9 հուլիսի 2021 թ., N 100-Ն

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2021 թվականի հուլիսի 6-ի թիվ 100-Ն որոշմամբ

«Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի
թիվ 50-Ն որոշմամբ

Ձև թիվ 4

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____

Ամսաթիվ	Ռեզիդենտներից ներգրաված միջոցներ				Ոչ ռեզիդենտներից ներգրաված միջոցներ							
					Ընդամենը				Այդ թվում՝ ոչ ռեզիդենտ բանկերից			
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արժույթ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Միջինը	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ենթակա է պահեստավորման՝ արտահայտված դրամով	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ենթակա է պահեստավորման՝ արտահայտված համապատասխան արտարժույթով	x				x				x			

Ամսաթիվ	0% դրույքաչափով պահուստավորման ենթակա ներգրավված միջոցներ				10% դրույքաչափով պահուստավորման ենթակա ներգրավված միջոցներ				Ընդամենը ներգրված միջոցներ				Վաղաժամկետ մարված միջոցների գծով պահուստավորման ենթակա գումարներ			
	դրամ	ԱՄՆ դոլար	եվրո	այլ	դրամ	ԱՄՆ դոլար	եվրո	այլ	դրամ	ԱՄՆ դոլար	եվրո	այլ	դրամ	ԱՄՆ դոլար	եվրո	այլ
1	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25				
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
					0	0	0	0								
Միջինը	0	0		0	0	0	0	0	x	x	x	x				
Ենթակա է պահեստավորման՝ արտահայտված դրամով	x	0	0	0	0	0	0	0	x	x	x	x				
Ենթակա է պահեստավորման՝ արտահայտված համապատասխան արտարժույթով	x	x	0	x	x	0	0	0	x	x	x	x				

հազար ՀՀ դրամ

Ամսաթիվ	ՀՀ դրամով արտահայտված դրամական միջոցների վիճակում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պահուստավորման ենթակա փոխառությունների վիճակում ՀՀ դրամով արտահայտված դրամական միջոցների վիճակում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պահուստավորման ենթակա ՀՀ ոչ դրամով արտահայտված փոխառությունների վիճակում			Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ, որոնք ենթակա չեն պարտադիր պահուստավորման, բացառությամբ ԿԲ-ից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների			
				ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արժույթ
1	26	27	28	29	30	31	32
Միջինը	0	0	0	0	0	0	0
Ենթակա է պահեստավորման՝ արտահայտված դրամով	x	x	x	x	x	x	x
Ենթակա է պահեստավորման՝ արտահայտված համապատասխան արտարժույթով	x	x	x	x	x	x	x

Բանկի վարչության նախագահ _____
(գործադիր տնօրեն)

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____

Պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում նվազեցված (զրոյական) դրույքաչափով ընդգրկվող ներգրավված միջոցներ

հազար ՀՀ դրամ

Ներգրավված միջոցի նույնականացման ներքին համարը	Պարտադիր պահուստավորման ենթակա ներգրավված միջոցների ընդհանուր գումարը	Ներգրավված միջոցների ընդհանուր գումարից ներգրավված միջոցների գումարը (ընդհանուրում)	Ներգրավված միջոցների ընդհանուր գումարից ներգրավված միջոցների գումարը (ընդհանուրում)	Ցածր (զրոյական) դրույքաչափով ընդգրկվող գումարը	Վերադարձի ենթակա գումարը	Սկզբնական ժամկետը	Պահպանման ենթակա ժամկետը	Ցածր (զրոյական) դրույքաչափով ընդգրկման ժամանակահատվածը	
								սկիզբ	տևողություն
1	2	3	4	5	6	7	8	10	11

Բանկի վարչության նախագահ _____
(գործադիր տնօրեն)

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____

*Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2021 թվականի երկրորդ եռամսյակ)**

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
22 հուլիսի 2021 թ., N 108-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2021 թ. հուլիսի 20-ին (ՀՀԳՏ, 23.07. 2021):

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒԼԻՍ 2021)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումների և ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է եռամսյակային կտրվածքով՝ հունվար, ապրիլ, հուլիս և հոկտեմբեր ամիսների տեղեկագրերում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլփոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 25
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 29
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 34
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 35
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 45
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ-ի կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 66
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 76
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 78
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնությունները
Վճարահաշվարկային համակարգ 87
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված քարտերով գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	2021 թ. հունիս	2021 թ. հունիսի իրական աճի փոփոխությունը 2020 թ. հունիսի նկատմամբ (%)	2021 թ. հուլիս	2021 թ. հուլիսի իրական աճի փոփոխությունը 2020 թ. հուլիսի նկատմամբ (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		8.2[1]		6.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	195818.1	1.3	189206.8	1.7
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	31069.5	1.3	35000.6	2.2
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	284137.0	10.3	300521.1	5.2
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	158850.9[1]	12.2[1]	163887.8	14.4
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	511.7	-8.0	632.1	-2.2
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	251200[1]	5.0[2]	259770[3]	0.6[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2021 թ.	Գնաճ	Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը	Գների փոփոխությունը շինարարությունում	Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.2	1.1	0.6	1.1
Փետրվար	0.6	0.5	1.0	0.9
Մարտ	1.0	1.8	-0.9	-0.9
Ապրիլ	1.3	0.4	3.1	-2.7
Մայիս	-0.4	1.0	6.4	-6.9
Հունիս	-0.8	3.1	2.5	-14.6
Հուլիս	-0.5	-3.3	1.1	-15.7
2021 թ. հունվար - հուլիսը 2020 թ. հունվար - հուլիսի նկատմամբ	6.1	10.1	13.2	3.9

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	2019	2020	2021
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	1.8	1.4	2.2
Փետրվար	0.6	-0.2	0.6
Մարտ	0.1	0.5	1.0
Ապրիլ	-0.1	0.9	1.3
Մայիս	-0.4	-0.1	-0.4
Հունիս	-1.9	-1.4	-0.8
Հուլիս	-1.9	-2.1	-0.5
Օգոստոս	-0.4	-0.1	
Սեպտեմբեր	0.2	-0.2	
Հոկտեմբեր	0.6	0.5	
Նոյեմբեր	1.1	1.3	
Դեկտեմբեր	1.3	3.4	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.8	0.3	4.5
Փետրվար	1.9	-0.5	5.3
Մարտ	1.9	-0.1	5.8
Ապրիլ	2.2	0.9	6.2
Մայիս	2.8	1.2	5.9
Հունիս	2.5	1.7	6.5
Հուլիս	1.7	1.5	8.2
Օգոստոս	0.6	1.8	
Սեպտեմբեր	0.5	1.4	
Հոկտեմբեր	0.9	1.3	
Նոյեմբեր	1.0	1.6	
Դեկտեմբեր	0.7	3.7	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ [5]

Անվանում	*2021 թ. հուլիսը 2020 թ. հուլիսի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (փոկոսային կետ)*
Գնաճ	**8.2**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	13.5	5.03
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	9.2	0.41
Հագուստ և կոշիկ	8.1	0.32
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	1.1	0.17
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	9.3	0.32
Առողջապահություն	5.9	0.57
Տրանսպորտ	11.8	1.03
Կապ	0.9	0.04
Հանգիստ և մշակույթ	0.7	0.01
Կրթություն	2.1	0.07
Ռեստորաններ և հյուրանոցներ	2.9	0.04
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	4.0	0.23

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [5,6]

Ժամանակաշրջան	2019	2020	2021
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	-0.2	0.0	0.7
Փետրվար	0.1	0.1	0.8
Մարտ	0.1	0.0	0.8
Ապրիլ	0.0	0.5	0.6
Մայիս	-0.1	0.0	0.4
Հունիս	0.0	-0.1	0.3
Հուլիս	-0.2	-0.1	0.3
Օգոստոս	0.1	0.1	
Սեպտեմբեր	0.2	0.3	
Հոկտեմբեր	0.1	0.3	
Նոյեմբեր	0.1	0.3	
Դեկտեմբեր	0.1	0.9	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	1.2	0.4	3.0
Փետրվար	1.0	0.4	3.7
Մարտ	0.9	0.3	4.6
Ապրիլ	0.7	0.8	4.6
Մայիս	0.7	0.8	5.1
Հունիս	0.8	0.7	5.5
Հուլիս	0.8	0.8	5.9
Օգոստոս	0.7	0.8	
Սեպտեմբեր	0.6	0.9	
Հոկտեմբեր	0.2	1.2	
Նոյեմբեր	0.1	1.4	
Դեկտեմբեր	1.8	2.2	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2021 թ. հուլիսը 2020 թ. հուլիսի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**5.9**	
Բուսական յուղ արևածաղկի	75.2	0.61
Բենզին	56.8	0.47
Հավի միս (ամբողջական հավ)՝ թարմ, պաղեցրած	34.0	0.40
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար	7.2	0.37
Հաց ցորենի՝ բարձր տեսակի	8.4	0.35
Օդային տրանսպորտի միջազգային չվերթներ իրականացնող ծառայություններ	48.8	0.27
Միս խոզի՝ թարմ, պաղեցրած	31.7	0.20
Շաքարավազ	39.4	0.17
Կարագ սերուցքային	15.9	0.14
Լվացքի փոշի ավտոմատ մեքենայի համար	12.7	0.14
Օղի այլ երկրների արտադրության	18.8	0.10
Ծխագլանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրության	14.6	0.10
Հավի բուդ՝ թարմ, պաղեցրած	17.1	0.10
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից՝ լրացուցիչ բնակատեղիների համար	7.8	0.10
Այլ դեղագործական ապրանքներ	16.1	0.09

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայած տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

